Հաստատում եմ

Տնօրեն

Ջիլ գյուղի միջնակարգ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ դասարանի դասղեկի աշխատանքային պլան

Դասարանի կազմը

| հ/հ | Ազգանուն անուն ,հայրանուն | Ծննդյան օր,ամիս,տարի |
|---|---|---|
| **1.** | Ամյան Մանե Անդրանիկի | **20.09.2016** |
| **2.** | Առուստամյան Անահիտ Ալեքսանդրի | **12.04.2016** |
| **3.** | Ավետյան Ռուզաննա Արթուրի | **19.11.2016** |
| **4.** | Աբրահամյան Մերի Գրիգորի | **09.02.2016** |
| **5.** | Բաղյան Անի Արմենի | **22.03.2016** |
| **6.** | Ծուղունյան Րաֆֆի Արմանի | **30.04.2016** |
| **7.** | Մկրտիչյան Անի Անդրանիկի | **08.10.2016** |
| **8.** | Վիրաբյան Նարե Միհերի | **26.02.2016** |

Կրթական , դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք ուսումնադաստիարակչական մի շարք հարցեր՝ հետևել ուսուցման գործընթացին, պարբերաբար դասալսումներ կազմակերպել, տարբեր զրույցներ ունենալ աշակերտների հետ,կազմակերպել արտադասարանական էքսկուրսիաներ՝թանգարան, թատրոն....

Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

2-րդ դասարանում սովորում են 8 աշակերտ՝ 7 աղջիկ, 1 տղա, որոնք ունեն ընդհանուր առմամբ լավ ընդունակություններ: Դասարանի մթնոլորտը դրական է , կոլեկտիվը ակտիվ է , կատարում են բոլոր տրված հանձնարարությունները: Աշխատում են իրենց ընդունակությունների չափով:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

1.Համագործակցելով ուսուցիչների հետ՝ դաստիարակչական աշխատանքներ տանել դասարանի բոլոր աշակերտների հետ:

2. Ամուր կապ հաստատել ծնողների հետ, այցելել աշակերտների տները, ծանոթանալ նրանց օրվա ռեժիմի հետ:

3. Անընդհատ աշխատանք տանել դասարանի հետ, ստեղծել միասնական և կարգապահ կոլեկտիվ:

4. Հետևել դասարանի և աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին:

Հայեցի դաստիարակություն

Անկախ Հայաստանի քաղաքացիներ դաստիարակելու համար պետք է աշակերտների մոտ ձևավորել ազգային ինքնագիտակցություն և մտածողություն,հաղորդակցում իր ժողովրդի անցյալին,պատմությանը,պատմամշակութային ժառանգությանը և հավատն առ Աստված:

**Հոգևոր դաստիարակություն**

Հոգևոր դաստիարակությունը աշակերտներին տեղեկություններ հաղորդելն է «Սուրբ Աստվածաշնչի» մասին,խրախուսել երեխաներին կարդալ մանկական Աստվածաշունչ: Ծանոթացնել մեր հոգևոր մշակույթի արժեքներին, պատմությանը, մասնակից դարձնել հիշարժան տարեթվերի նշմանը:

Գեղագիտական դաստիարակությունը

Ջգտել հասնել այն բանին,որ աշակերտները կարողանան տարբերել վեհը,գեղեցիկը,բարին ու նպաստել դրանց զարգացմանն ու հաստատմանը:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը

Հայոց պատմությունը սովորեցնում է ,որ փառահեղ հաղթանակները տարվում են անմնացորդ հայրենասիրությամբ, մարտական և բարոյական պատրաստվածությամբ:

Ֆիզիկական դաստիարակությունը

Երեխային ուղղորդել,որ նա մասնակցի դպրոցական և տարածաշրջանային մարզական միջոցառումներին,առաջնորդվել « Առողջ հոգի առողջ մարմնում » կարգախոսով:

Աշխատանքային դաստիարակություն

Պետք է խրախուսել աշակերտների սերը դեպի աշխատանքը,հարգել աշխատողներին,գնահատել նրանց աշխատանքը,օգնել ծնողներին գյուղատնտեսական գործերում:

Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնություն,բացատրել բնության պահպանման կարևորությունը,գնահատել բնության գեղեցկությունը,կարողանալ օգնել բնությանը վերականգնվել :

Դպրոց – ընտանիք կապը

Պետք է այցելել տներ,ծանոթանալ օրվա ռեժիմին:Անհատական մոտեցում ունենալ յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, ապահովել դպրոց-ընտանիք կապը, հրավիրել ծնողական ժողովներ, խրախուսել ծնողների ներկայությունը դասերին:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը

| Ուսումնա-կան շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարողներ |
|---|---|---|
| 1 | Զրույց՝ «Ուսման կարևորությունը» | Դասղեկ,աշակերտներ |
| 2 | Զրույց՝ «Ինչպե՞ս ձևավորել դասարանում դրական փոխհարաբերություններ» | Դասղեկ,աշակերտներ |
| 3 | Զրույց՝ «Որքա՞ն ժամանակ ենք հատկացնում մտածելուն» | Դասղեկ,աշակերտներ |
| 4 | «Թեստերի միջոցով երեխաների գիտելիքների ստուգում» | Դասղեկ,աշակերտներ |
| 5 | Զրույց՝ « Երջանիկ ընտանիք» | Դասղեկ,աշակերտներ |
| 6 | Պահպանել հիգիենայի կանոնները | Դասղեկ,աշակերտներ |
| 7 | Զրույց՝ «Հարգել դիմացինի կարծիքը» | Դասղեկ,աշակերտներ |
| 8 | Ընտանիքը ճիշտ ներկայացնել | Դասղեկ,աշակերտներ |
| 9 | Զրուց՝ « Վերջ մեծամտությանը» | Դասղեկ,աշակերտներ |
| 10 | Զրույց՝ «Բարեկամություն» | Դասղեկ,աշակերտներ |
| 11 | «Առողջություն» | Դասղեկ,աշակերտներ |
| 12 | Զրույց՝ «Լավ սնունդ » | Դասղեկ,աշակերտներ |
| 13 | Զրույց՝ «Կոկիկ տեսք» | Դասղեկ,աշակերտներ |
| 14 | Զրույց՝ «Գնահատել ժամանակը» | Դասղեկ,աշակերտներ |
| 15 | Զրույց՝« Բնության պահպանումը» | Դասղեկ,աշակերտներ |
| 16 | Զրույց՝ «Մեր աշխատանքի նկատմամբ» | Դասղեկ,աշակերտներ |
| 17 | Զրույց՝ «Տոնական օրերի նշանակությունը» | Դասղեկ,աշակերտներ |

| | | |
|---|---|---|
| 18 | Զրույց՝ «Գումարի հետ ճիշտ վարվել» | Դասղեկ,աշակերտներ |
| 19 | Զրույց՝ «Ճաշակ ձևավորել նուրբի,համեստի հանդեպ» | Դասղեկ,աշակերտներ |
| 20 | Զրույց՝ «Բարի մարդը նա է,ով…» | Դասղեկ,աշակերտներ |
| 21 | Զրույց՝ «Չար մարդը նա է,ով…» | Դասղեկ,աշակերտներ |
| 22 | Զրույց՝ «Կյանքում տեղ չտալ ստին» | Դասղեկ,աշակերտներ |
| 23 | Զրույց՝ «Առողջ ապրելակերպ» | Դասղեկ,աշակերտներ |
| 24 | Զրույց՝ «Ինչ ցանես,այն էլ կհնձես» | Դասղեկ,աշակերտներ |
| 25 | Զրույց՝ «Մարդասիրությունը» | Դասղեկ,աշակերտներ |
| 26 | Խաբեությունը | Դասղեկ,աշակերտներ |
| 27 | Զրույց «Հարգանք մեծերի հանդեպ» | Դասղեկ,աշակերտներ |
| 28 | Զրույց Որն է ձեր ընտանիքի սիրած տոնը | Դասղեկ,աշակերտներ |
| 29 | Զրույց՝ Երբ են ձեզ խրախուսում» | Դասղեկ,աշակերտներ |
| 30 | «Ես բարկանում եմ, երբ …» | Դասղեկ,աշակերտներ |
| 31 | Զրույց՝ «Ընկածին վեր հանել» | Դասղեկ,աշակերտներ |
| 32 | Զրույց՝ «Ես խաբում եմ ,եթե…» | Դասղեկ,աշակերտներ |
| 33 | Զրույց՝« Ինձ դուր է գալիս» | Դասղեկ,աշակերտներ |
| 34 | Զրույց՝ «Դպրոցում ես աշխատում եմ լինել» | Դասղեկ,աշակերտներ |